

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում /այսուհետ՝ նախարարություն/ քաղաքացիների ընդունելությունը իրականացնում է նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր և արձանագրային բաժինը (այսուհետ՝ բաժին):

2. Քաղաքացիների գրավոր և էլեկտրոնային փոստի միջոցով ստացված դիմումներին ընթացք է տրվում համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2003 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գործավարության կարգը հաստատելու մասին» N 190-Ն հրամանով հաստատված կարգի:

3. Բաժինն ընդունում է քաղաքացիներին, ապահովում դիմումների, այդ թվում էլեկտրոնային փոստի միջոցով ստացված, հաշվառման գրանցամատյանում սահմանված կարգով գրանցումը, ուսումնասիրում քաղաքացիների կողմից բարձրացրած հարցերի բովանդակությունը և տեղում տալիս է պարզաբանումներ: Անհրաժեշտության դեպքում, հարցի ուսումնասիրմանը և պարզաբանմանը մասնակցում են նաև նախարարության աշխատակազմի համապատասխան մասնագետները: Քաղաքացիները պարզաբանումներից անբավարարվածության դեպքում կարող են դիմել նախարարության աշխատակազմի ղեկավարին, հերթագրվել ընդունելության նախարարի և նախարարի տեղակալների մոտ:

4. Նախարարի մոտ քաղաքացիների ընդունելության հերթագրման նպատակով քարտուղարության պետի, իսկ նախարարի տեղակալների մոտ՝ օգնականների կողմից վարվում է գրանցամատյան /ձև 1/:

5. Նախարարի մոտ քաղաքացիների ընդունելության օր է սահմանվում յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը, ժամը 14.⁰⁰-16.⁰⁰ –ը :

6. Նախարարի տեղակալների մոտ քաղաքացիների ընդունելության օր է սահմանվում յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը, ժամը 14.⁰⁰-16.⁰⁰ –ը :

7. Նախարարության աշխատակազմի ղեկավարը և բաժինը քաղաքացիների ընդունելություն իրականացնում են յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9.⁰⁰-18.⁰⁰ –ը :

8. Նախարարության աշխատակազմի ղեկավարը, նախարարի տեղակալները, աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները

Նախարարի ընդունելության օրերին մինչև ընդունելության ավարտը չպետք է բացակայեն իրենց աշխատատեղերից՝ ընդունելության ընթացքում բարձրացված հարցերին անհրաժեշտության դեպքում օպերատիվ լուծում տալու համար:

9. Նախարարի, նախարարի տեղակալների մոտ ընդունելությունից հետո քաղաքացիների դիմումները հանձնվում են բաժին՝ դրանց հանձնարարականներին համապատասխան ընթացք տալու ու կատարման նկատմամբ վերահսկողությունն ապահովելու համար:

10 Բաժինը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 7-ը նախարարությունում եռամսյակի ընթացքում ստացված քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների հետ միաժամանակ, վերլուծում և ամփոփում է նաև նախարարի ու նախարարի տեղակալների մոտ քաղաքացիների ընդունելության արդյունքները և նախապատրաստում ամփոփ հաշվետվություն՝ նախարարին և ՀՀ կառավարություն ներկայացնելու, ինչպես նաև նախարարության պաշտոնական էլեկտրոնային կայք էջում տեղադրելու համար:

Քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է աշխատակազմի քարտուղարության ընդհանուր և արձանագրային բաժնում յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 14⁰⁰-16⁰⁰

Ընդհանուր և արձանագրային բաժնի պետ՝

Մարինե Հովակիմյան

հեռ. 521292 525900

Նախարարի տեղակալների մոտ քաղաքացիների ընդունելության օր է սահմանվում յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրը, ժամը 14.⁰⁰ -16.⁰⁰

ՀՀ գյուղատնտեսության նախարար

ՍԵՐԳՈ ՎԱՉԱԳԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

մոտ քաղաքացիների ընդունելության օր է սահմանվում յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը, ժամը 14⁰⁰-16⁰⁰

Քարտուղարության պետ՝

Մայա Չմշկյան

հեռ. 524641

Նախարարության հասցեն՝
ք.Երևան-0010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական շենք, 3

Էլեկտրոնային կայքի հասցեն՝

www.minagro.am

E-mail: agro@minagro.am

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և նախարարի կողմից քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

2011 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քաղաքացիներից ստացել է թվով 148 առաջարկություն, դիմում և բողոք, որից 24-ը համապատասխան հանձնարարականներով վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից

Դիմումները՝ ըստ բնույթի	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբանում	Մերժվել է	Ծանոթություն
Առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման և գանձման սերմացուի ՀՀ ներմուծման ենթակա լինելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելու մասին	7	7		7		
<<Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրում>> ընդգրկելու և սերմացու տրամադրելու մասին	14	12		12		2 դիմում ընթացքի մեջ է: 12 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ մարզպետարաններին հատկացվել է աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որը վերջիններիս կողմից կբաշխվի մարզի հողօգտագործողներին 0.4 մինչև 3 հա հողատարածքների վրա ցանք կատարելու համար և առաջարկվել է դիմումատուներին սերմացու ստանալու համար դիմել մարզպետարան :

<p>Գյուղատնտեսական գործունեությանը զբաղվելու համար վարկ, դրամաշնորհ տրամադրելու և ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին</p>	<p>11</p>	<p>10</p>		<p>10</p>	<p>1 դիմում ընթացքի մեջ է: 10 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով վարկ ստանալու համար անհրաժեշտ է դիմել առևտրային բանկերին : Ինչ վերաբերում է մատչելի պայմաններով վարկերի տրամադրմանը, ապա պետության կողմից աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական տնտեսություններին զարնան գյուղատնտեսական աշխատանքներին նախապատրաստվելու համար: Նշված նպատակի համար հատկացված ֆինանսական միջոցներն ամբողջությամբ տրամադրվել են տնտեսավարողներին : Նախատեսվում է իրականացնել վարկավորման երկրորդ փուլը: Առաջարկվել է դիմումատուներին ծրարգրի երկրորդ փուլը սկսելուց հետո դիմել ծրագիրն իրականացնող բանկերին, ներկայացնելով համապատասխան գործունեության համար պահանջվող փաստաթղթեր:</p>
<p>Արտերկրից ներկրվող տոհմային երինջներ և գյուղատնտեսական կենդանիներ հատկացնելու մասին</p>	<p>6</p>	<p>5</p>		<p>5</p>	<p>1 դիմում ընթացքի մեջ է : 4 դիմումատուի պարզաբանվել է, որ հանրապետություն տոհմային երինջներ ներկրելու դեպքում</p>

						<p>նրանց խնդրանքը կբավարարվի: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն անհատուց չի կարող տրամադրել գյուղատնտեսական կենդանիներ, հնարավորության սահմաններում կարող է աջակցել տարածամկետ վճարման պայմանով 4 տարի մարման ժամկետով հանրապետություն ներկրվող տոհմային երինջների հատկացման հարցում:</p>
<p>Մենդամթերքի իրացման օրենքով սահմանված պահանջների և պայմանների խախտմամբ վաճառվող սննդամթերքի իրացումն արգելելու մասին</p>	2	2		2		
<p>Գույքի, հողատարածքի օտարման և վարձակալության տրամադրման, վարձակալության վարձավճարն անփոփոխ թողնելու մասին</p>	18	14	6		8	4 դիմում ընթացքի մեջ է:
<p>Անասնաբուժական ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված ժամկետը լրանալու հետ կապված աշխատանքից ազատելու մասին</p>	6	6	6			
<p>Աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկաճ և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների դիմաց</p>	8	7		7		<p>1 դիմում ընթացքի մեջ է: 7դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N84-Ն</p>

փոխհատուցում տրամադրելու մասին						որոշմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հատկացված գումարները նախատեսված էին միայն 2007 թվականի ընթացքում աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասների դիմաց սեփականատերերին օժանդակություն տրամադրելու համար և 2007 թվականից հետո ՀՀ կառավարության կողմից այդ նպատակով ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:
Գյուղատնտեսության առանձին ոլորտների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին	13	13	11	2		1 դիմում համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վերահասցեագրվել է ՀՀ բնապահպանության նախարարություն:
Արխիվային տեղեկանք տրամադրելու մասին	5	5	3	2		
Գյուղատնտեսական տեխնիկա տրամադրելու մասին	4	4		4		4 դիմումատուի պարզաբանվել է, որ ճապոնական դրամաշնորհի հաշվին հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան իրացվել է աճուրդային կարգով՝ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N134-Ն որոշմամբ սահմանված չափո-

						րոշիչներին համապատասխանող և մրցութային եղանակով ընտրված գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին և նրանց խնդրանքին հնարավոր է անդրադառնալ հանրապետություն գյուղատնտեսական տեխնիկայի նոր խմբաքանակ ներկրելուց հետո:
Պտղի և խաղողի իրացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	3	3	2	1		
Զրարբիացման համակարգերի շահագործման, ջրատնտեսական կառույցների, ոռոգման ցանցերի վերանորոգման, Մեղրի գետից ջրօգտագործման ծրագրի իրականացումը դադարեցնելու մասին	6	6		6		6 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող, ինչպես նաև 2012-2014թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նմանատիպ աշխատանքներ նախատեսված չեն և ՀՀ պետական բյուջեով այդ նպատակով նախարարությանը գումար չի հատկացվել:
Աշխատանքի տեղավորման, աշխատանքային պայմանագրի ժամկետն երկարաձգելու և կատարված աշխատանքների դիմաց վճարումներն ապահովելու մասին	7	5	1	4		2 դիմում ընթացքի մեջ է:
Տարերային աղետների հետևանքով կրած վնասների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	3	3		3		3 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 19-ի N726 որոշմամբ հաստատված

						տարերային աղետների դեպքում պետական միջամտության քաղաքականության հայեցակարգի համաձայն՝ մասնավոր ունեցվածքում աղետի հետևանքների վերացման աշխատանքներն իրականացվում են սեփական միջոցների հաշվին:
Անորակ կարտոֆիլի տնկանյութի օգտագործման հետևանքով կրած վնասը փոխհատուցելու մասին	3	3		3		
Սխտորի սերմ, պարարտանյութ հատկացնելու մասին	3	3		3		
Մանր եղջերավոր կենդանիների, կաթի և կաթնամթերքի ներմուծման թույլտվություն տալու մասին	2	2	2			
Գյուղատնտեսության տարբեր ոլորտներում գործունեություն ծավալելու ծրագրային առաջարկներին աջակցություն ցուցաբերելու մասին	8	8		8		
Տրամադրված գարու սերմացուի տեսակի և որակի վերաբերյալ գիտական եզրակացություն տրամադրելու մասին	2	2		2		
Տրաբնույթ հարցեր (<Թամարա Ֆրութ> ՓԲԸ-ի կողմից օրգանիկ այգիների հիմնման ծրագրում ընդգրկելու, գայլերի ոհմակի հարձակումից 70 գլուխ մայր ոչխարների դիմաց	17	14	5	8	1	3 դիմում ընթացքի մեջ է: <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> << օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 1 դիմում վերահասցեագրվել է <<

<p>փոխհատուցում տրամադրելու, անասնազխաքանակի գողության դեպքի բացահայտման գործում աջակցություն ցուցաբերելու, հողի և ջրի վարձը չվճարելու արտոնություն տալու, վառելիքայտ տրամադրելու, արոտավայրերի վարձավճարը ճշտելու, ուսումը շարունակելու գործում օժանդակելու և այլն)</p>						<p>Գեղարքունիքի, 1 դիմում՝ Արարատի, 2 դիմում՝ Վայոց Ձորի մարզպետարաններին, 1 դիմում՝ <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ>> ՊՀ-ին :</p>
<p>ԸՆԴԱՄԵՆԸ</p>	<p>148</p>	<p>134</p>	<p>36</p>	<p>89</p>	<p>9</p>	<p>14 դիմում ընթացքի մեջ է:</p>

2. 2011 թվականի հուլիս-սպտեմբեր ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարվել է քաղաքացիների 351 ընդունելություն

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբանում	Մերժվել է	Ծանոթություն
Այգեգործության բնագավառում մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու մասին	1	1	1			
Աշխատանքով ապահովելու մասին	15	15		4	11	
Գյուղատնտեսական տեխնիկա տրամադրելու մասին	6	6		6		
Աշխատանքից ազատված անասնաբույժներին աշխատանքով ապահովելու մասին	12	12	10	2		
Աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկաճ խոզերի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	5	5		5		
Լիցենզիա տրամադրելու կարգը պարզաբանելու մասին	1	1	1			
Արխիվային տեղեկանք տրամադրելու մասին	15	15		15		
Տոհմային երինջներ տրամադրելու մասին	6	6		6		
Աշխատավարձի պարտքերը մարելու մասին	2	2	2			
Վարկ ստանալու համար միջնորդություն կատարելու մասին	1	1		1		
Ֆինանսական օգնություն տրամադրելու մասին	1	1		1		

Գյուղատնտեսական մթերքների իրացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	20	20	20			
Երևան քաղաքում կազմակերպված գյուղատնտեսական բացօթյա շուկային մասնակցելու մասին	10	10	10			
Ոռոգման ջրատարի վերանորոգման մասին	1	1		1		
Աշնանացան գարու և ցորենի սերմացու հատկացնելու մասին	30	30		30		
Սերմերի փոխառության պայմանագրեր կնքելու մասին	210	210		195	15	
ԸՆԴԱՄԵՆԸ	351	351	254	71	26	

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և նախարարի կողմից քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

2011 թվականի ապրիլ-հունիս ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քաղաքացիներից ստացել է թվով 285 առաջարկություն, դիմում և բողոք, որից 71-ը համապատասխան հանձնարարականներով վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից

Դիմումները՝ ըստ բնույթի	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբանում	Մերժվել է	Ծանոթություն
Վարկ տրամադրելու մասին	33	33		32	1	<p>19 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը վարկ տրամադրելու իրավասություն չունի, ինչպես նաև պարզաբանվել է ս.թ ապրիլի 1-ից առևտրային բանկերի կողմից գյուղացիական տնտեսություններին վարկի տրամադրման արտոնյալ պայմանները:</p> <p>13 դիմումատուի պարզաբանվել է, որ գյուղացիական տնտեսությունների վարկավորման աջակցության պետական ծրագրի առաջին փուլն ավարտվել է /ծրագիրը գործել է 2011 թվականի ապրիլի 1-ից/:</p> <p>Ներկայումս ՀՀ կառավարության և ՀՀ Կենտրոնական բանկի միջև</p>

						բանակցություններ են վարվում վարկավորման երկրորդ փուլը սեպտեմբեր ամսից սկսելու ուղղությամբ:
Գարու և եգիպտացորենի արտադրության զարգացման ծրագրերում ընդգրկելու մասին	24	24		24		24 դիմումատուի պարզաբանվել է, որ ծրագրերում ընդգրկվելու համար պետք է դիմեն համայնքի ղեկավարին, որի կողմից շահառուների ցուցակը կներկայացվի մարզպետարան, վերջինիս կողմից ամփոփվելուց հետո՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:
<Թամարա Ֆրուֆ> ՓԲԸ-ի կողմից իրականացվող օրգանիկ այգիների հիմնման ծրագրում ընդգրկելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2009 թվականի մայիսի 25-ի N137-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կուսումնասիրվի նրանց հողատարածքները և դրանցում օրգանական գյուղատնտեսության վարման հնարավորությունները: Սահմանված պահանջները բավարարելու դեպքում դիմումատուները կընդգրկվեն ծրագրում:
Տոհմային երինջներ ներկրման գործընթացին մասնակցելու մասին	2	2		2		“Դախան” ՍՊԸ-ի տնօրենին պարզաբանվել է, որ համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ նախարարությունն աշխատանքներ կիրականացնի տոհմային երինջների ներկրման ուղղությամբ,

						որի մասին կտեղեկացվի ընկերության տնօրենին:
Արտերկրից ներկրված տոհմային երինջներ հատկացնելու մասին /1 դիմում վերաբերում է տոհմային երինջների ձեռքբերման համար մուծված գումարի վերաբերյալ տեղեկանք տրամադրելուն /	32	32	1	31		31 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանք վերցվել են հաշվառման, և 2011 թվականին հանրապետություն տոհմային երինջներ ներկրվելու դեպքում՝ նրանց խնդրանքը կբավարարվի: Երինջները տրամադրվելու են տարաժամկետ վճարման պայմանով՝ 4 տարի մարման ժամկետով:
Տեղեկատվություն տրամադրելու մասին	14	13	11	2		1 դիմում ընթացքի մեջ է:
Կարկտահարության պատճառած վնասների չափերը ճշտելու և պայմանագրային պարտավորությունները վերանայելու և վարկի մարման ժամկետն երկարաձգելու մասին	8	8		8		3 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 29.06.2011թ. N971-Ն որոշման համաձայն՝ շահառուների հետ կնքված պայմանագրերում անհաղթահարելի ուժի ազդեցության կետ նախատեսված չէ, ուստի շահառուները պարտավոր են կատարել պայմանագրային պարտավորությունները և նախարարության կողմից կատարվում է ծրագրի իրականացման նկատմամբ մոնիտորինգ: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ նախարարությունը բանակցում է Ազբա Կրեդիտ Ազրիկոլ բանկի հետ կարկտահարությունից

						<p>առավել տուժած գյուղացիների նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելու և նրանց համար վարկի մարման արտոնյալ պայմաններ սահմանելու ուղղությամբ:</p> <p>4 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը բնական աղետների պատճառած վնասների դիմաց փոխհատուցում չի տրամադրում: Կարկտահարության վերաբերյալ ՀՀ մարզպետարաններից ստացված տեղեկատվությունները ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում ամփոփվում և սահմանված կարգով ներկայացվում են ՀՀ կառավարություն:</p>
Չվճարված աշխատավարձը վճարելու, աշխատավարձը բարձրացնելու մասին	2	2		2		<p>2 դիմումատուի պարզաբանվել է, որ նախարարությունը 2011 թվականի երկրորդ կիսամյակում նախատեսում է համապատասխան ֆինանսական միջոցներ հայթհայթել համայնքային անասնաբույժների աշխատավարձը բարձրացնելու համար:</p>
Գույքի, հողատարածքի օտարման և վարձակալության տրամադրման թույլտվություն տալու մասին	20	18		12	6	<p>2 դիմում ընթացքի մեջ է:</p> <p>1 դիմում վերահասցեագրվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, 1-ական</p>

						դիմումներ Սյունիքի և Արմավիրի մարզպետարաններ:
Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառքի լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին	2	2	2			
Աշխատանքում վերականգնելու, աշխատանքից ազատվելու հետ կապված վերջնահաշվարկում արձակուրդային գումարը ներառելու և աշխատանքի ընդունելու մասին	10	8		9		2 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումի կատարման ժամկետը սահմանված կարգով երկարաձգվել է մինչև ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառուցվածքային փոփոխության ավարտը: Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նախկին աշխատակիցներին /ՀՀ Նախագահին, ՀՀ վարչապետին, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին և ՀՀ գյուղատնտեսության նախարարին ուղղված դիմումներ/ պարզաբանվել է, որ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 01.04.2011թ. N211-Ա և N212-Ա որոշումներով համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 02.09.2002թ. N35-Ա որոշման մեջ՝

					<p>ուժը կորցրած է ճանաչվել “ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ բաժնի” մի շարք կետեր և լրացվել են նորերը՝ սահմանելով ծառայության պաշտոնները:</p> <p>Միաժամանակ պարզաբանվել է, որ ս.թ. ապրիլի 1-ից ծառայությանը հատկացվել է ֆինանսական միջոցներ և վերջինս պետք է վճարի տեսչությունների նախկին աշխատակիցների աշխատավարձերն ամբողջ աշխատած ժամանակահատվածի համար, ինչպես նաև աշխատավարձի ժամկետանց վճարման համար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված տուգանքը:</p> <p>2 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը և թափուր պաշտոններում նշանակվում են միայն մրցութային կարգով: Անհրաժեշտ է հետևել “Քաղաքացիական ծառայության” շաբաթաթերթին, որում տպագրվում են հայտարարություններ քաղաքացիական ծառայության թափուր</p>
--	--	--	--	--	---

						պաշտոնների վերաբերյալ:
Դրամաշնորհի հաշվին Հայաստանի Հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկա հատկացնելու մասին	10	10		10		10 դիմումատուի պարզաբանվել է, որ դրամաշնորհի հաշվին հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան իրացվելու է ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N134-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխանող և մրցութային եղանակով ընտրված գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին:
Խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	13	12		12		1 դիմում ընթացքի մեջ է: 12 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N84-Ն որոշմամբ ՀՀ գյուղատնտեսությանը հատկացված գումարները նախատեսված էին միայն 2007 թվականի ընթացքում աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասների դիմաց սեփականատերերին օժանդակություն տրամադրելու համար և 2007 թվականից հետո ՀՀ կառավարության կողմից այդ նպատակով ֆինանսական միջոցներ չեն հատկացվել: Միաժամանակ պարզաբանվել է, որ անկաճ և հարկադիր սպանդի

						ենթարկված խոզերի վերաբերյալ տվյալները գրանցվել և պահվում են համակարգչային տեղեկատվական շտեմարանում:
Գյուղատնտեսական տարբեր ոլորտներում գործունեություն սկսելու ծրագրային առաջարկներին աջակցություն ցուցաբերելու մասին	19	19	1	18		
«Գյուղատնտեսության նախարարի մոտ ընդունելության մասին /Ֆերմերային տնտեսության զարգացման, ֆինանսական աջակցության, սերմարտադրության զարգացման հարցերով/	4	3	3			1 դիմում ընթացքի մեջ է:
2010 թվականին մթերված խաղողի դիմաց վճարումների կատարման և վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունների հետ 2011 թվականի բերքի մթերման պայմանագիր կնքելու գործում աջակցություն ցուցաբերելու մասին	9	9	4	5		3 դիմումի առնչությամբ «Գյուղատնտեսության նախարարությունը դիմել է խաղող մթերած <Գրեյթ Վելլի> ՀՁ ՍՊԸ-ին, որն պարտավորվել է սեղմ ժամկետում կատարել վճարումները: 6 դիմումի առնչությամբ աշխատանք է տարվել վերամշակող ձեռնարկությունների հետ բերքի մթերման պայմանագրեր կնքելու ուղղությամբ:
Ջրագծերի անցկացում, ոռոգման ցանցին միանալու թույլտվություն, ջրի վարձը չվճարելու արտոնություն տալու, հակահեղեղային միջոցառումներ իրականացնելու մասին	7	7	1	6		3 դիմում համաձայն 'Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին' ՀՀ օրենքի՝ վերահասցեագրվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային

						տնտեսության պետական կոմիտե: 3 դիմումատուի պարզաբանվել է, որ հակահեղեղային միջոցառումների իրականացման նպատակով նախարարությանը ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:
ՌԴ ծուկ և ձկնամթերք արտահանելու համար ՌԴ-ի համապատասխան մարմիններին միջնորդագիր ներկայացնելու մասին	6	6		6		6 դիմումատուի պարզաբանվել է, որ աշխատանքներ են տարվում ՌԴ ծուկ և ձկնամթերք արտահանելու ուղղությամբ, որի շրջանակներում նրանց խնդրանքը հաշվի կառնվի:
Գարնանացան գարու սերմացու հատկացնելու, սերմացուն շահառուներին բաշխման գործընթացում տեղ գտած խախտումները վերացնելու մասին	5	5		5		2 դիմումատուի պարզաբանվել է, որ գարնանացան գարու սերմացուն՝ համաձայն ծրագրի, ամբողջությամբ բաշխվել է ՀՀ մարզպետարաններին և նախարարությունը սերմացուների պաշարների չի տնօրինում: 3 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ներկր- ված և մարզպետարաններին հատկացված սերմացուների հետագա բաշխումն իրականաց- վում է մարզպետարանների կողմից՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N279-Ն, փետրվարի 24-ի N 280-Ն, մարտի 31-ի N 330-Ն որոշումների:

Պարարտանյութ հատկացնելու մասին	3	3		3	3 դիմումատուի պարզաբանվել է, որ գյուղատնտեսության նախարարությունը պարարտանյութերի պաշարների չի տնօրինում: Շուկայականից ցածր գնով պարարտանյութ ձեռք բերելու համար անհրաժեշտ է դիմել հանրապետություն պարարտանյութ ներկրող կազմակերպություններին: Դիմումատուներին տրամադրվել է կազմակերպությունների անվանումները և հեռախոսահամարները:
Կարտոֆիլի տնկանյութ և սխտորի սերմացու հատկացնելու մասին	7	6		6	1 դիմում ընթացքի մեջ է: 6 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը կարտոֆիլի պաշարների չի տնօրինում և միաժամանակ հայտնվել կարտոֆիլի տնկանյութի ներկրմամբ զբաղվող կազմակերպությունների անվանումները և հեռախոսահամարները:
Ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին	3	3	1	2	
Համակարգի ձեռնարկություններում տեղ գտած օրինախախտումների մասին	3	3		3	2 դիմում ԳԱՄԿ-երի և 1դիմում 'Հայանտառ' ՊՈԱԿ-ի վերաբերյալ ներկայացվել են կեղծ ազգանուններով և ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ դիմումներում նշված փաստերը չեն համապա-

						տասխանում իրականությանը: Համաձայն համապատասխան զեկուցագրերի՝ դիմումները հանվել են հսկողությունից:
Անասնաբուժական դեղամիջոցների գրանցման մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից գրանցվում են միայն անասնաբուժական կենսապատրաստուկները:
Աշխատած տարիների վերաբերյալ արխիվային տեղեկանք տրամադրելու մասին	2	1	1			1 դիմում ընթացքի մեջ է:
Հողի անօրինական սեփականաշնորհման փաստերն ուսումնասիրելու մասին	2	2		2		Համաձայն 'Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին' ՀՀ օրենքի՝ 1դիմում վերահաստեղծվել է Արմավիրի մարզպետարան, 1 դիմում՝ Շիրակի մարզպետարան:
'Բակտոռոդէնտիցիդ' մկնասպան միջոցի, գրանուլացված թռչնաղբի արտադրության կազմակերպման, հողի բերրիության բարձրացման նպատակով ոչ անավնադական կենսապատրաստուկների օգտագործման մասին	10	10		10		
Հակահեղեղային միջոցառումներ իրականացնելու մասին	3	3	1	2		2 դիմումատուի պարբանվել է, որ հակահեղեղային միջոցառումների իրականացման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը ֆինանսական

						միջոցներ չեն հատկացվել: 1 դիմում համաձայն 'Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին' ՀՀ օրենքի վերահասցեագրվել է ՀՀ տարածքային կառավարման նա- խարարության ջրային տնտեսու- թյան պետական կոմիտե:
Տրաբնույթ հարցեր	28	26	11	15		1 դիմում համաձայն 'Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին' ՀՀ օրենքի վերահասցեագրվել է ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե: 2 դիմում ընթացքի մեջ է:
ԸՆԴԱՄԵՆԸ	285	275	37	231	7	10 դիմում ընթացքի մեջ է:

2. 2011 թվականի ապրիլ-հունիս ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարվել է քաղաքացիների ընդունելություն

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբանում	Մերժվել է	Ծանոթություն
Գարնանացան գարու սերմացու հատկացնելու մասին	10	10	8	2		
Բույսերի պատվաստուկների գրանցման կարգի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	10	10	10			
Պարարտանյութ հատկացնելու մասին	5	5		5		
Աշխատանքով ապահովելու մասին	1	1		1		
Աշխատանքից ազատված անասնաբույժներին աշխատանքով ապահովելու մասին	15	15	10	5		
Աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկաժ խոզերի դիմաց փոխհատուցում ստանալու մասին	3	3		3		
Լիցենզիա տրամադրելու կարգը պարզաբանելու մասին	1	1		1		
Գյուղատնտեսական մթերքների արտահանման և ներկրման կարգը պարզաբանելու մասին	1	1	1			

Գյուղատնտեսական տեխնիկա տրամադրելու մասին	6	6		6		
Արխիվային տեղեկանք տրամադրելու մասին	7	7		7		
Վարկ ստանալու համար միջնորդություն կատարելու մասին	1	1		1		
Ֆինանսական օգնություն տրամադրելու մասին	2	2		1	1	
Գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման սկզբունքները պարզաբանելու մասին	1	1	1			
Երևան քաղաքում գյուղատնտեսական բացօթյա շուկա կազմակերպելու գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1	1			
ԸՆԴԱՄԵՆԸ	64	64	31	32	1	

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և նախարարի կողմից քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2011 թվականի հունվար-մարտ ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քաղաքացիներից ստացել է թվով 286 առաջարկություն, դիմում և բողոք, որից 91-ը համապատասխան հանձնարարականներով վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից

Դիմումները՝ ըստ բնույթի	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբանում	Մերժվել է	Ծանոթություն
Վարկ տրամադրելու մասին	30	25		25		5 դիմում ընթացքի մեջ է: 2011 թվականի հունվարի 10-ից մինչև մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում վարկ խնդրող 18 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը վարկ տրամադրելու լիազորություն չունի, ինչպես նաև պարզաբանվել է առևտրային բանկերի կողմից վարկերի տրման պայմանները: 2011 թվականի մարտի 12-ին Ծաղկաձորում կայացած ՀՀ գյուղատնտեսության զարգացման 2011 թվականի ծրագրերը և հիմնախնդիրները՝ սեմինար-խորհրդաժողովում ՀՀ Նախագահի հանձնարարականի համաձայն՝ ՀՀ Կենտրոնական բանկը առևտրային չորս բանկերի հետ պայմանավորվածություն է

					<p>ծեռք բերել ս.թ ապրիլի 1-ից գյուղացիական տնտեսություններին վարկ տրամադրելու վերաբերյալ, հետևյալ պայմաններով՝</p> <p>-յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը տրամադրվող վարկի մայր գումարը կազմում է մինչև 3 մլն ՀՀ դրամ մինչև 2 տարի մարման ժամկետով,</p> <p>-վարկը տրամադրվում է մինչև 14 տոկոս փաստացի տոկոսադրույքով, որի 4 տոկոսային կետը սուբսիդավորվում է պետության կողմից,</p> <p>-մայր գումարի և տոկոսների վճարման համար սահմանված արտոնյալ ժամկետը վարկի տրամադրման պահից հաշվարկվելու է առնվազն վեց ամիս /վարկի տոկոսների վճարման պարտականությունը վարկառուի մոտ առաջանում է վարկի տրամադրման պահից սկսած վեց ամիս հետո/:</p> <p>7 դիմումատուի պարզաբանվել է վերը նշվածը:</p>
Դրամաշնորհի հաշվին Հայաստան ներկրված գյուղատնտեսական տեխնիկա հատկացնելու մասին	65	58		58	<p>7 դիմում ընթացքի մեջ է:</p> <p>Ճապոնիայի կառավարության <Սակավապահով ֆերմերներին դրամաշնորհային աջակցություն> 10-րդ դրամաշնորհային ծրագրի</p>

						<p>շրջանականերում ՀՀ է ներկրվել 61 տրակտոր:</p> <p>58 դիմումատուի պարզաբանվել է, որ տեխնիկան հատկացվելու է ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N134-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխանող և մրցութային եղանակով ընտրված գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին /կոոպերատիվներին/:</p>
Գարու սերմարտադրության զարգացման ծրագրում ընդգրկվելու մասին	30	18		18		<p>12 դիմում ընթացքի մեջ է:</p> <p>18 դիմումատուի պարզաբանվել է, որ ծրագրում ընդգրկվելու համար պետք է դիմեն համայնքի ղեկավարին, որի կողմից շահառուների ցուցակը կներկայացվի մարզպետարան, վերջինիս կողմից ամփոփվելուց հետո՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: Ծրագրում ընդգրկվելու առավելությունը տրվելու է բարձրլեռնային, սահմանամերձ համայնքների այն շահառուներին, որոնց հողատարածքներում մեկից ավելի տարի ցանք չի կատարվել, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին, 2010 թվականին հացահատիկային մշակաբույս չցանած հողատարածքների սեփականատերերին :</p>

						Սահմանված չափորոշիչներին համապատասխանող հողատարածք ունեցող շահառուների հետ կկնքվեն պայմանագրեր և կհատկացվի սերմացու:
Արտերկրից ներկրված տոհմային երինջներ հատկացնելու մասին	14	11		11		3 դիմում ընթացքի մեջ է: 11 դիմումատուի պարզաբանվել է, որ 2011 թվականին հանրապետություն տոհմային երինջներ ներկրելու դեպքում՝ նրանց խնդրանքը կբավարարվի: Երինջները տրամադրվելու են տարաժամկետ վճարման պայմանով՝ 4 տարի մարման ժամկետով:
Լիցենզիայի գործողությունը կասեցնելու, և դրա կասեցման մասին որոշումը վերանայելու մասին	3	2	2			1 դիմում ընթացքի մեջ է:
Ձկնաբուծական տնտեսություն հիմնելու, ձկնաբուծության զարգացմանն ուղղված պետական աջակցության մեխանիզմներ սահմանելու մասին	5	5		5		
Ձկնամթերքի, տարբեր տեսակի գյուղմթերքների իրացման և գյուղատնտեսական կենդանիների արտահանման ու ներկրման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	5	5		5		
Խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասի դիմաց փոխհատուցում	11	10		10		1 դիմում ընթացքի մեջ է: 10 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2008

տրամադրելու մասին						թվականի փետրվարի 7-ի N84-Ն որոշմամբ ՀՀ գյուղատնտեսությանը հատկացված գումարները նախատեսված էին միայն 2007 թվականի ընթացքում աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասների դիմաց սեփականատերերին օժանդակություն տրամադրելու համար և 2007 թվականից հետո ՀՀ կառավարության կողմից այդ նպատակով ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:
Բնական աղետների, ինչպես նաև տարբեր պատճառներով կրած վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	3	2		2		1 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմում համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի վերահասցեագրվել է ՀՀ Շիրակի մարզպետարարան:
Համակարգի առանձին կազմակերպություններում թույլ տրված խախտումների և թերացումների մասին	5	4	2	2		1 դիմում ընթացքի մեջ է:
Արխիվային տեղեկանք տրամադրելու մասին	4	4	3	1		
Աշխատանքում վերականգնելու, աշխատանքով ապահովելու, աշխատանքային պայմանագրի ժամկետն երկարաձգելու մասին	13	10	3	7		3 դիմում ընթացքի մեջ է: 6 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը, ըստ որի թափուր

						պաշտոններում նշանակվում են միայն մրցութային կարգով:
Գյուղատնտեսական տարբեր ծրագրերում ընդգրկելու մասին	4	2		2		2 դիմում ընթացքի մեջ է:
Գույքի, հողատարածքի օտարման և վարձակալության տրամադրման թույլտվություն տալու մասին	8	3		2	1	5 դիմում ընթացքի մեջ է:
Գազաֆիկացման, ջրամատակարարման, ափապաշտպան կառուցվածքների վերականգնման, ճանապարհաշինարարական աշխատանքներ իրականացնելու մասին	7	4	1	3		3 դիմում ընթացքի մեջ է:
Գյուղատնտեսության բնագավառի տարբեր ոլորտների գործունեության հետ կապված հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին	12	11		11		1 դիմում ընթացքի մեջ է:
Գյուղատնտեսության տարբեր ոլորտների զարգացման ծրագրային առաջարկներն իրականացնելու գործում աջակցություն ցուցաբերելու մասին	16	12	2	10		4 դիմում ընթացքի մեջ է:
Գարու և ցորենի սերմացու, կարտոֆիլի տնկանյութ, վառելափայտ, թունանյութեր հատկացնելու մասին	15	9		9		6 դիմում ընթացքի մեջ է:
<Թամարա Ֆրութ> ՓԲԸ-ի կողմից իրականացվող օրգանիկ այգիների հիմնման ծրագրում ընդգրկելու մասին	5	1			1	4 դիմում ընթացքի մեջ է, չնայած միջանկյալ պատասխան է ուղարկվել դիմումատուներին, այն մասին, որ << գյուղատնտեսության նախարարի

						<p>2009 թվականի մայիսի 25-ի N137-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կուսումնասիրվի նրանց հողատարածքները և դրանցում օրգանական գյուղատնտեսության վարման հնարավորությունները:</p> <p>Սահմանված պահանջները բավարարելու դեպքում դիմումատուները կընդգրկվեն ծրագրում:</p> <p>Հանձնաժողովի կողմից դիմումատուների հողատարածքների ուսումնասիրությունից հետո վերջիններիս կտրվեն համապատասխան պատասխաններ:</p>
Հայաստանի Հանրապետությունում գրանուկացված թռչնաղբի արտադրություն կազմակերպելու, այրված գոմաղբն որպես պարարտանյութ օգտագործելու մասին	6	4		4		2 դիմում ընթացքի մեջ է:
Տարաբնույթ հարցեր	25	19	4	15		<p>6 դիմում ընթացքի մեջ է:</p> <p>1 դիմում համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի վերահասցեագրվել է ՀՀ Արարատի մարզպետարարան:</p>
ԸՆԴԱՄԵՆԸ	286	219	17	200	2	67 դիմում ընթացքի մեջ է:

2. 2011 թվականի հունվար-մարտ ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարվել է քաղաքացիների 81 ընդունելություն

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբանում	Մերժվել է	Ծանոթություն
Յորենի, գարու, եգիպտացորենի սերմացու հատկացնելու մասին	25	25		25		
Աշխատանքով ապահովելու մասին	1	1	1			
Միջատասպան միջոցների ներկրման համար թույլատվություն տալու մասին	1	1	1			
Գյուղատնտեսական մթերքների արտահանման և ներկրման կարգը պարզաբանելու մասին	1	1	1			
Արխիվային տեղեկանք տրամադրելու մասին	15	15	3	12		
Եգիպտացորենի սերմացուի իրացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1	1			
Տոհմային երինջներ հատկացնելու մասին	7	7		7		
Հողերի միավորման մասին	2	2		2		
Գրանցված բույսերի պաշտպանության միջոցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու մասին	1	1	1			
<<Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականներին գարու և եգիպտացորենի սերմնաբուծության և	20	20		20		

սերմարտադրության զարգացման ծրագրում> ընդգրկելու մասին						
Գյուղատնտեսության վարման ծրագրային առաջարկի իրականացմանն աջակցելու մասին	2	2	2			
Ֆերմերային տնտեսություն հիմնելու գործում մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու մասին	1	1	1			
Շաքարի ճակնդեղի մշակման համար մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու մասին	2	2	2			
<Ազոցեովիտ 1> և <Ազովիտ 1> պարարտանյութերի կիրառման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ	1	1	1			
Անասնանրուծական ծրագիր մշակելու համար մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու մասին	1	1	1			
ԸՆԴԱՄԵՆԸ	81	81	15	66		

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի կողմից 2011 թվականի հունվար –մարտ ամիսների ժամանակահատվածում /31.01.2011 , 25.02.2011, 25.03.2011/

կատարած քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս.Կարապետյանի կողմից կատարվել է 39 քաղաքացիների ընդունելություն

<i>Օրը, ամիսը</i>	<i>Քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը՝ քստ բնույթի</i>	<i>Ընդամենը</i>	<i>Պատասխանվել է</i>	<i>Տրվել է դրական լուծում</i>	<i>Տրվել է պարզաբանում</i>	<i>Մերժվել է</i>	<i>Ծանոթություն</i>
31.01.2011	Հանրապետության համայնքներում գյուղատնտեսության տարբեր ոլորտների և ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրային առաջարկների իրականացմանն աջակցելու մասին	2	2	1	1		
25.02.2011	Ֆերմերային /ձկնաբուծական/ տնտեսություն հիմնելու գործում մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու մասին	1	1		1		
25.03,2011		3	3		3		
25.02.2011	Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական աջակցություն ստանալու. վարկ տրամադրելու կամ դրամաշնորհային ծրագրում ընդգրկելու մասին	4	4		4		
31.01.2011	Գյուղական վայրերում ագրովերամշակման և արևտրա-արդյունաբերական ձեռնարկություններում նորարարական առաջարկություններ ներդնելու և սարքավորումներ փորձարկելու մասին	1	1	1			
25.03,2011		1	1		1		

31.01.2011	Գույքի և հողատարածքի օտարման կամ վարձակալության տրամադրման	1	1		1		
25.02.2011	թույլտվություն տալու մասին	1	1		1		
25.02.2011	Խմելու ջրի, որոգման համակարգի վերականգնման և գազաֆիկացման	1	1		1		
25.03.2011	աշխատանքները իրականացնելու մասին	1	1		1		
31.01.2011	Արտերկրից հանրապետություն ներկրված տոհմային երինջներ հատկացնելու մասին	1	1			1	
25.03.2011	Գյուղկենդանիների արհեստական բեղմնավորման համար լաբորատոր պայմաններով ապահովելու մասին	1	1		1		
25.03.2011	Գյուղկենդանիների գողության հետևանքով կրած վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	1	1		1		
31.01.2011	Հողի բերրիության բարձրացմանը նպաստող օրգանական պարարտանյութի, կենսաբանական պատրաստուկի արտադրության կազմակերպման և իրացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1		1		
25.03.2011	Դրամաշնորհի հաշվին Հայաստան ներկրված գյուղատնտեսական տեխնիկա և առանձին պահեստամասեր հատկացնելու մասին	1	1		1		

25.03.2011	Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի ստեղծման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1		1		
31.01.2011	Հանրապետության շուկաներում, տոնավաճառներում և վաճառակետերում սննդամթերքի անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին	1	1	1			
25.02.2011	Սերմացու և տնկանյութ հատկացնելու , գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների սուբսիդավորման ծրագրում ընդգրկելու մասին	2	2	1	1		
25.03.2011		3	3	1	2		
31.01.2011	Խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասը փոխհատուցելու մասին	2	2	1		1	
25.03.2011		1	1		1		
31.01.2011	Աշխատանքով ապահովելու մասին	1	1		1		
25.02.2011		1	1			1	
31.01.2011	Անձնական հարցերով	1	1	1			
25.02.2011		1	1	1			
31.01.2011	Նախարարության գործունեությունը ամսագրում լուսաբանելու և համագործակցելու առաջարկներին աջակցություն ցուցաբերելու մասին	1	1			1	

25.03,2011	Ջերմոցային տնտեսության գազի մատակարարման և վճառումների ժամկետները երկարաձգելու մասին	1	1	1			
25.03.2011	Բանկերի կողմից տրամադրված գյուղվարկերի շամկետները երկարաձգելու մասին	1	1		1		
	Ընդամենը	39	39	10	25	4	